

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՐԵՎԱՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«[●]» [●]ի 2024թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, որի անունից հանդես է գալիս նախարար պարոն Գևորգ Պապոյանը (այսուհետ՝ **«Հիմնադիր 1»** կամ **«Հայաստանի Հանրապետություն»**), ով գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման հիման վրա,

«ՀԱՅՓՈՍ» Փակ բաժնետիրական ընկերությունը (Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող ընկերություն, պետական գրանցման համար՝ 286.140.00393, գրանցված՝ 12.10.1994թ., ՀՎՀՀ՝ 02507464, իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Կենտրոն, Սարյան փ., 2. 22, 0002, հեռախոսահամարը՝ [●]) (այսուհետ՝ **«Հիմնադիր 2»** կամ **«Հայփոստ»**), ում անունից հանդես է գալիս ընկերության գլխավոր գործադիր տնօրեն պարոն Արայիկ Աբրահամյանը, ով գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման հիման վրա, և

«ՌԵՆՇԻՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող ընկերություն, պետական գրանցման համար՝ 286.110.04705, գրանցված՝ 02.10.2002թ., ՀՎՀՀ՝ 02564558, իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Կենտրոն, Փավստոս Բուզանդի փ., 91, 72 տրծք, 0010, հեռախոսահամարը՝ +374 11 900 100, +374 11 900 200) (այսուհետ՝ **«Հիմնադիր 3»** կամ **«Ռենշին»**), ում անունից հանդես է գալիս ընկերության գլխավոր տնօրեն պարոն Էդուարդ Մարությանը, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,

Հիմնադիր 1-ը, Հիմնադիր 2-ը և Հիմնադիր 3-ը (այսուհետ հետագա շարադրանքում հիշատակվելու դեպքում առանձին նաև՝ **«Հիմնադիր»** կամ **«Կողմ»**, իսկ միասին՝ **«Հիմնադիրներ»** կամ **«Կողմեր»**) կնքեցին ընկերության ստեղծման մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **«Պայմանագիր»**) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա, 2023 թվականի նոյեմբերի 17-ի N 1972-Ա և 2024 թվականի ապրիլի 4-ի N 467-Ա որոշումները (այսուհետ միասին՝ «Որոշում»), ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը և նպատակ ունենալով իրագործել Որոշմամբ նախանշված ծրագիրը, որի իրականացման ժամանակացույցը, բյուջեն և բնութագիրը ներկայացված են սույն Պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 2-ում (այսուհետ՝ «**Ծրագիր**»)՝ Հիմնադիրները ստեղծում են «Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» անվանումով, փակ բաժնետիրական ընկերություն հանդիսացող առևտրային իրավաբանական անձ (այսուհետ՝ «**Ընկերություն**»):

1.2. Ընկերության իրավաբանական հասցե է սահմանվում հետևյալ հասցեն. Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2-րդ փակուղի 8 շենք, 41 ոչ բնակելի տարածք:

1.3. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանվում է 21,898,520,000 (քսանմեկ միլիարդ ութ հարյուր իննսուներե միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

1.4. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանվում է 21,898,520 (քսանմեկ միլիոն ութ հարյուր իննսուներե հազար հինգ հարյուր քսան) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի (այսուհետ՝ «**Բաժնետոմսեր**»), որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

1.5. Ընկերության բոլոր Բաժնետոմսերը տեղաբաշխվում են Հիմնադիրների միջև՝ դրանց անվանական արժեքով:

1.6. Բաժնետոմսերը Հիմնադիրների միջև տեղաբաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

| | |
|----------------------------------|---|
| Հայաստանի Հանրապետություն | 4,161,260 (չորս միլիոն մեկ հարյուր վաթսուներե հազար երկու հարյուր վաթսուներե հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր, |
| «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ | 6,788,000 (վեց միլիոն յոթ հարյուր ութսուներե հազար) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր, |
| «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ | 10,949,260 (տասը միլիոն ինը հարյուր քառասունինը հազար երկու հարյուր վաթսուներե հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր: |

1.7. Ընկերության հիմնադիր ժողովն Ընկերության միանձնյա գործադիր կառավարումն իրականացնող անձի՝ Գլխավոր տնօրենի պաշտոնում նշանակում է Հիմնադիր 3-ի կողմից առաջարկված անձին:

1.8. Հիմնադիրները պարտավոր են կատարել սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

1.9. Հիմնադիր 2-ը և Հիմնադիր 3-ը սույնով հավաստում են, որ սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) և ստացել են Ընկերության հիմնադրումը՝ որպես տնտեսավարող սուբյեկտների հայտարարագրման ենթակա համակենտրոնացում թույլատրելու վերաբերյալ համաձայնությունը (հիմք՝ Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի որոշում թիվ 467-Ա)՝ այդ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

1.10. Հիմնադիրները պարտավորվում են Ընկերության հիմնադրման, պետական գրանցման, ինչպես նաև դրա կանոնադրական կապիտալի համալրման համար իրականացնել հետևյալ գործողությունները, հետևյալ ժամկետներում.

- 1) Սույն Պայմանագրի կնքման օրը Հիմնադիր 2-ը և Հիմնադիր 3-ը օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված իրավասու մարմնի կողմից Ընկերության հիմնադրման, դրանում մասնակցության և վերջինիս կանոնադրական կապիտալում համապատասխան ներդրում կատարելու մասին որոշումների սկանավորված տարբերակները պետք է ուղարկեն համապատասխան մյուս Հիմնադիրներին:
- 2) Ընկերության հիմնադիր ժողովը տեղի է ունենում ոչ ուշ, քան սույն Պայմանագրի կնքմանը հաջորդող աշխատանքային օրը՝ Հիմնադիրների միջև համաձայնեցված կոնկրետ ամսաթվին, ժամին և վայրում:
- 3) Հիմնադիրներից յուրաքանչյուրը պարտավորվում է սահմանված կարգով ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունն Ընկերության հիմնադիր ժողովում:
- 4) Հիմնադիրները պարտավորվում են Ընկերության պետական գրանցումից հետո 2 (երկու) օրվա ընթացքում կնքել սույն Պայմանագրի հավելվածով նախատեսված ձևով բաժնետիրական համաձայնագիրը:
- 5) Հիմնադիր 1-ը պարտավորվում է ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցումից հետո՝ 75 օրվա ընթացքում կատարել իր կողմից ձեռք բերված Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումը (ներդրումը) ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք, 2 շինություն հասցեում (վկայական՝ N 03032022-01-0029) գտնվող անշարժ գույքով (այսուհետ՝ Գույք 1)՝ գնահատված արժեքը՝ 4,161,260,000 (չորս միլիարդ մեկ հարյուր վաթսուներեկ միլիոն երկու հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ՝ Ընկերության հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
- 6) Հիմնադիր 2-ը պարտավորվում է ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցումից հետո՝ 75 օրվա ընթացքում կատարել իր կողմից ձեռք բերված Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումը (ներդրումը) ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Սարյան փողոց 22 (վկայական՝ N15122021-01-0282) հասցեում գտնվող անշարժ գույքով (այսուհետ՝ Գույք 2)՝ գնահատված արժեքը՝ 6,788,000,000 (վեց միլիարդ յոթ հարյուր ութսունութե միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը և հողամասի կադաստրային արժեքը)՝ Ընկերության հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
- 7) Հիմնադիր 3-ը պարտավորվում է ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցումից հետո՝ 3 ամսվա ընթացքում, կատարել իր կողմից ձեռք բերված Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումը (ներդրումը)՝ Ընկերության բանկային հաշվին փոխանցելով 10,949,260,000 (տասը միլիարդ ինը հարյուր քառասունինը միլիոն երկու հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ գումար՝ պայմանով, եթե ապահովվել է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.
 - Կադաստրի կոմիտեում պետական գրանցում է ստացել Գույք 1-ի և Գույք 2-ի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը,
 - Գույք 1-ը և Գույք 2-ը համապատասխանում են և շարունակում են համապատասխանել սույն Պայմանագրի 4.3 և 4.4 կետերով սահմանված պահանջներին և հավաստումներին,
 - ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով նախաձեռնվել է Որոշման համաձայն ք.Երևան, Սարյան և ք.Երևան, Պարոնյան փողոցների միջև (Սարյան 22 հասցեում գտնվող գույքին հարակից)՝ շուրջ 13,200.54 քմ մակերեսով հողամասը պետության կարիքների համար բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու գործընթացը (ընդ որում՝ Կողմերն ընդունում են, որ հողամասի մակերեսն ու տեղակայումը կարող են ենթարկվել ճշտումների՝ ելնելով առանձին հողակտորների օտարման օրենսդրական արգելքներից՝ սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ

գործող օրենսդրության համաձայն, կամ աննպատակահարմարությունից, եթե վերջինիս առկայության վերաբերյալ առկա է Հիմնադիր 1-ի և Հիմնադիր 3-ի համաձայնությունը),

- Որոշումը գործում է և դրանում չեն կատարվել Հիմնադիր 3-ի հետ չհամաձայնեցված փոփոխություններ,

- Չի ընդունվել պետական (այդ թվում՝ դատական) կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որևէ ակտ, որն անհնարին է դարձնում կամ կարող է անհնարին դարձնել Ծրագրի իրականացումը, կամ ավելի քան 6 (վեց) ամսով երկարացնում է կամ կարող է երկարացնել Ծրագրի իրականացման ժամկետը կամ ավելի քան 20 (քսան) տոկոսով թանկացնում է կամ կարող է թանկացնել Ծրագրի իրականացման բյուջեն,

- Հիմնադիրների և Ընկերության միջև սույն Պայմանագրի հավելվածի համաձայն կնքվել է բաժնետիրական համաձայնագիր, որը լուծված չէ (շարունակում է ուժի մեջ լինել):

8) Հիմնադիր 3-ը պարտավորվում է Երևանում Համաշխարհային առևտրի կենտրոն (World Trade Center (WTC)) ապրանքային նշանի օգտագործման բոլոր իրավունքներն անհատույց փոխանցել Ընկերությանը:

1.11. Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը հրավիրվում է հետևյալ օրակարգով՝

- (ա) Ընկերության հիմնադիր ժողովի նախագահի և քարտուղարի ընտրություն,
- (բ) Ընկերության հիմնադրում,
- (գ) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի հաստատում,
- (դ) Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատում,
- (ե) Ընկերության կանոնադրության հաստատում,
- (զ) Ընկերության խորհրդի ընտրություն,
- (է) Ընկերության գլխավոր տնօրենի նշանակում,
- (ը) այլ կազմակերպչական հարցեր:

1.12. Ընկերության գրանցումը մերժելու, հիմնադիր ժողովը չկայանալու կամ ժողովի կողմից Հիմնադիրների գործունեությանը հավանություն չտալու դեպքում՝

- 1) մինչ այդ ծագած պարտավորությունների համար պատասխանատվությունն ըստ Հիմնադիրների բաժանվում է կատարվելիք ներդրումների համամասնությամբ,
- 2) Ընկերության ստեղծման հետ կապված ծախսերը Հիմնադիրների միջև բաշխվում են կատարվելիք ներդրումներին համամասնորեն:

1.13. Հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթները, Ծրագրի մեկնարկից¹ սկսած 5 (հինգ) տարվա ընթացքում Հիմնադիր 2-ին պատկանող Ընկերության 6,788,000 (վեց միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը ենթակա են Հիմնադիր 2-ի կողմից վաճառքի և Հիմնադիր 3-ի կողմից ձեռքբերման՝ սույն Պայմանագրով սահմանված անվանական արժեքով կառուցապատման փուլերին համապատասխան՝ հետևյալ ժամանակացույցով և պայմաններով.

| Կառուցապատման փուլերը | Փուլի նկարագրությունը | Վաճառքի ենթակա բաժնետոմսերի քանակը (հատ) | Մեկ բաժնետոմսի առուվաճառքի | Բաժնետոմսերի առուվաճառքի ընդհանուր |
|-----------------------|-----------------------|--|----------------------------|------------------------------------|
|-----------------------|-----------------------|--|----------------------------|------------------------------------|

¹ Ծրագրի մեկնարկ է համարվում ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք, 2 շինություն և ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մ. Սարյան փողոց 22 շենք հասցեներում գտնվող անշարժ գույքերի (այսուհետ՝ Շենք) քանդման աշխատանքների մեկնարկը, իսկ եթե քանդման թույլտվությունը տրվել է Ընկերության պետական գրանցմանը և կանոնադրական կապիտալի ամբողջական համալրմանը հաջորդող 12-ամսյա ժամկետի ավարտից ավելի ուշ՝ ապա Ծրագրի մեկնարկ է համարվում քանդման թույլտվության տրման պահը (ընդ որում, եթե նույն 12-ամսյա ժամկետում Ընկերությունն օրենքին համապատասխանող դիմում չի ներկայացրել քանդման թույլտվություն ստանալու համար, ապա Ծրագրի մեկնարկ է համարվում այդ 12-ամսյա ժամկետի ավարտը):

| | | | արժեքը (<< դրամ) | արժեքը (<< դրամ) |
|-----------|--|-----------|------------------|------------------|
| 1-ին փուլ | Շենքի քանդման աշխատանքների մեկնարկ, բայց ոչ ուշ, քան Ընկերության պետական գրանցմանը և կանոնադրական կապիտալի ամբողջական համալրմանը հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի ավարտ | 1,357,600 | 1,000 | 1,357,600,000 |
| 2-րդ փուլ | Ծրագրի շրջանակներում կառուցվող համալիրի (այսուհետ՝ Համալիր) շինարարության թույլտվության ստացում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 24-ամսյա ժամանակահատվածի ավարտ | 1,357,600 | 1,000 | 1,357,600,000 |
| 3-րդ փուլ | Համալիրի երկաթբետոնե կարկասի 50%-ի կառուցում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 36-ամսյա ժամանակահատվածի ավարտ | 1,357,600 | 1,000 | 1,357,600,000 |
| 4-րդ փուլ | Համալիրի երկաթբետոնե կարկասի 100%-ի կառուցում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 48-ամսյա ժամանակահատվածի ավարտ | 1,357,600 | 1,000 | 1,357,600,000 |
| 5-րդ փուլ | Համալիրի շինարարության ավարտական ակտի ստացում, բայց ոչ ուշ, քան Ծրագրի մեկնարկին հաջորդող 57-ամսյա ժամանակահատվածի ավարտ | 1,357,600 | 1,000 | 1,357,600,000 |

Այն դեպքում, եթե Հիմնադիր 3-ին պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակը նվազում է Ընկերության հիմնադրման պահի դրությամբ Հիմնադիր 1-ին պատկանող Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրվող ձայների քանակից, ապա Հիմնադիր 3-ի՝ սույն կետով նախատեսված Հիմնադիր 2-ին պատկանող բաժնետոմսերի ձեռքբերման պարտականությունն այդ նվազմանը համամասնորեն փոխանցվում է

Ընկերության այն բաժնետիրոջը/բաժնետերերին, ում կողմից Ընկերության բաժնետոմսեր ձեռք բերելու արդյունքում տեղի է ունեցել այդ նվազումը: Այն դեպքում, եթե Հիմնադիր 3-ն այլևս չունի Ընկերության կողմից թողարկված որևէ բաժնետոմս, վերջինիս կողմից Հիմնադիր 2-ին պատկանող բաժնետոմսերի ձեռքբերման պարտականությունը դադարում է:

1.14. Կողմերն ընդունում են, որ Հիմնադիր 3-ն իրավունք ունի Ընկերությանը փոխառության հիմքով դրամական միջոցներ տրամադրել Ընկերության նախնական ծախսերը հոգալու նպատակով մինչև Ծրագրով սահմանված ֆինանսավորումները ներգրավելը:

2. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

2.1. Հիմնադիրներն անվերապահորեն ընդունում են, որ սույն Պայմանագրին համապատասխան ներկայացված կամ դրանից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով: Ընդ որում, թղթային ձևով ծանուցումը պետք է ստորագրված լինի ուղարկող Հիմնադրի անունից գործելու համար լիազորված անձի կողմից և ուղարկվի սույն կետում նշված ֆիզիկական հասցեին, իսկ էլեկտրոնային ձևով ծանուցումը պետք է ուղարկվի ուղարկող Հիմնադրի՝ սույն կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեից, հասցեատիրոջ՝ սույն կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

Հայաստանի Հանրապետություն

Ում՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0010, Մհեր Մկրտչյան փող., 5 շենք
Հեռ՝ +374 [11597114 (104)]
Էլ.փոստ՝ [●]

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ

Ում՝ Գլխավոր գործադիր տնօրենին Արայիկ
Աբրահամյանին
Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան փ., 2. 22
Հեռ՝ +374 [●]
Էլ.փոստ՝ [●]

«ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ

Ում՝ Գլխավոր տնօրեն Էդուարդ
Մարության
Հասցե՝ ՀՀ, Երևան, Կենտրոն, Փավստոս
Բուզանդի փ., 91, 72 տրծք, 0010
Հեռ՝ +374 11 900 100, +374 11 900 200
Էլ.փոստ՝ info@renshin.am

2.2. Ընդ որում, սույն Պայմանագրի 2.1 կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեները համարվում են պատշաճ ծանուցման հասցեներ, նման հասցեներին կատարված ծանուցումները համարվում են պատշաճ ծանուցումներ, ծանուցող Հիմնադիրը պարտավոր չէ ապացուցել, որ մյուս Հիմնադիրը փաստացի ստացել և (կամ) կարդացել է ծանուցումը թեև վեճի կամ տարաձայնության պարագայում պարտավոր է ապացուցել, որ փոխանակված էլեկտրոնային փոստի հասցեին իրականում ուղարկվել է ծանուցումը, ծանուցումների մասին իրենց այս պայմանավորվածության նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 20.1 գլուխը, և դատարանը, արքիտրաժային տրիբունալը, ինչպես նաև պետական մարմինները կարող են Հիմնադրի պահանջով Հիմնադիրների միջև կնքված սույն Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ կիրառել Հիմնադիրների միջև կնքված սույն Պայմանագրով սահմանված ծանուցման կարգը:

3. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների և (կամ) պարտավորությունների (այսուհետ՝ պարտավորություն) խախտման կամ չկատարման կամ անպատշաճ կատարման համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից այն

դեպքում, երբ պարտավորությունների կատարումն անհնար է դարձել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (Ֆորս-մաժոր), այն պայմանով, որ վերջինս անմիջականորեն ազդել է պարտավորությունների կատարման վրա և Կողմը չէր կարող կանխատեսել կամ կանխել անհաղթահարելի ուժի ի հայտ գալը կամ դրա ազդեցությունը իր պարտավորությունների վրա:

3.2. Անհաղթահարելի ուժի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, ինչպես նաև արտակարգ ու անկանխելի այլ հանգամանքներ:

3.3. Կողմը, որի համար ստեղծվել է Ֆորս-մաժորային իրավիճակ, պետք է մյուս Կողմին գրավոր, իսկ եթե դա անհաղթահարելի ուժի ազդեցության պայմաններում հնարավոր չէ, ապա՝ բանավոր տեղեկացնի անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների մասին, բացատրելով անհաղթահարելի ուժի առկայության և ազդեցության մանրամասները: Այդ տեղեկացումը պետք է կատարվի անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պահից ողջամիտ ժամկետում:

3.4. Տեղեկացման մեջ պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝ անհաղթահարելի ուժի հանդիսացող հանգամանքների, դրանց ծագման ժամանակահատվածի, դրանց տևողության (եթե հնարավոր է կանխատեսել), այդպիսի հանգամանքների՝ պայմանագրային պարտավորությունների կատարման վրա ազդեցության և դրանով պայմանավորված այդպիսի պարտավորությունների խախտման (պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) վերաբերյալ: Սույն կետով նշված պարտականությունը չկատարելը զրկում է Կողմին այդ հանգամանքների ազդեցությամբ պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ չիրազեկելը կամ կետանցով իրազեկելը պայմանավորված է եղել հենց այդ հանգամանքներով:

3.5. Այն դեպքում, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրի գրավոր պահանջով սույն Պայմանագիրը համարվում է լուծված:

4. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

- 4.1. Հիմնադիրներից յուրաքանչյուրն առանձին-առանձին հավաստում և երաշխավորում է, որ
- լիովին և բավարար կերպով ծանոթ է սույն Պայմանագրի դրույթներին, սույն Պայմանագրին համապատասխան ստանձնած պարտավորություններին, կարող է ամբողջությամբ կնքել սույն Պայմանագիրը և ունի բոլոր այն լիազորությունները, որոնք անհրաժեշտ են դրա համար առաջացած պարտավորությունները կատարելու համար.
 - ստացել է արհեստավարժ իրավախորհրդատուի կարծիքն առ այն, որ սույն Պայմանագրով նախատեսված պայմանավորվածություններն ու պարտականություններն օրինական են ու համապատասխանում են ՀՀ գործող օրենքներին, նորմատիվ այլ իրավական ակտերին ու իր ներքին իրավական ակտերին (կիրառելիության դեպքում).
 - ճանաչում և ընդունում է սույն Պայմանագրի իմաստը և հետևանքները և հաստատում է, որ դրանցից բխող իրավական հետևանքները բխում են իր շահերից և ստորագրել է սույն Պայմանագիրը բարի կամքի դրսևորմամբ.
 - Պայմանագիրն արտահայտում է Կողմերից յուրաքանչյուրի օրինական, վավեր և վերջինիս պարտավորեցնող պարտականությունը, որը վերջինիս նկատմամբ կիրարկելի է դրանով սահմանված պայմաններին համապատասխան.
 - սույն Պայմանագրի և դրա հետ կապված բոլոր փաստաթղթերի կնքումը և կատարումը չեն խախտում և չեն խախտի ՀՀ գործող օրենքների և (կամ) նորմատիվ իրավական այլ ակտի որևէ դրույթ և չեն համարվի որևէ պայմանագրի

կամ այլ համաձայնագրի կամ պարտավորության խախտում, որի կողմ է հանդիսանում համապատասխան Հիմնադիրը կամ որով սահմանափակված է Կողմը կամ նրա գույքը.

- ստացել է սույն Պայմանագրի կնքման համար բոլոր անհրաժեշտ համաձայնություններն ու թույլտվությունները.
- բարեխղճորեն կիրականացնի իր իրավունքները, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով և սահմանված են ՀՀ կիրառելի օրենսդրությամբ, ինչպես նաև կձեռնարկի իր լավագույն ջանքերը սույն Պայմանագրով սահմանված պայմանների և կարգավորումների իրականացումն ապահովելու համար:

4.2. Հիմնադիր 2-ը և Հիմնադիր 3-ն առանձին-առանձին հավաստում և երաշխավորում է, որ

- հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում պատշաճ կարգով գրանցված գործող կազմակերպություն և ունի լիիրավ սեփականության իրավունք, որը նա ունի կամ կարող է ունենալ սույն Պայմանագրի նպատակների համար և իրավասու է կատարել գործունեություն, որը նա իրականացնում է կամ կարող է իրականացնել սույն Պայմանագրի նպատակների համար.
- սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ վճարունակ է և ընդգրկված չէ անվճարունակության, սնանկության, լուծարման կամ ինքնալուծարման գործընթացներում,
- սույն Պայմանագրի կնքումը և սույն պայմանների պահպանումը չի հանգեցնի իր կանոնադրության կամ դրա նկատմամբ կիրառվող օրենքի որևէ դրույթի խախտման:

4.3. Հիմնադիր 1-ը հավաստում է և երաշխավորում է, որ.

- Գույք 1-ը սեփականության իրավունքով պատկանում է Հիմնադիր 1-ին՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 03.03.2022թ. տրված թիվ 03032022-01-0029 վկայականի, և այն հնարավոր է (Հիմնադիր 1-ին հայտնի տեղեկությունների համաձայն) օգտագործել Ծրագրի իրականացման նպատակով.
- սույն Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում չկան, Գույք 1-ի՝ Ընկերության կանոնադրական կապիտալում ներդրման պահին չեն լինի Գույք 1-ի նկատմամբ իրավական կամ այլ սահմանափակումներ կամ խոչընդոտներ, գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր, որևէ անձի իրավունքներ, սահմանափակումներ, ծանրաբեռնումներ (ներառյալ՝ օգտագործման կամ վարձակալության իրավունք, գրավ, արգելանքներ և այլն), գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր, Գույք 1-ի գծով որևէ հարկային կամ այլ պարտավորություններ.
- առկա չեն տեղեկություններ, պայմաններ, նորմատիվ ակտեր, սահմանափակումներ, երրորդ անձանց իրավունքներ, թաքնված թերություններ մինչև Գույք 1-ի փոխանցումը, որոնք կարող են խոչընդոտել, սահմանափակել կամ անվավեր դարձնել սույն Պայմանագիրը կամ Ընկերության պետական գրանցումը կամ Գույք 1-ի ներդրումն Ընկերության կանոնադրական կապիտալում (փոխանցումն Ընկերությանը).
- առկա չէ կամ նախկինում չի եղել որևէ դատավարություն, վարչական վարույթ կամ քննություն ցանկացած պետական մարմնի կողմից Գույք 1-ի նկատմամբ, որը ներկայումս առկախված է կամ նախատեսվում է Գույք 1-ի նկատմամբ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ սույն Պայմանագրի օրինականության կամ վավերականության կամ սույն Պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրականացման վրա:

4.4. Հիմնադիր 2-ը հավաստում և երաշխավորում է, որ.

- Անշարժ Գույք 2-ը սեփականության իրավունքով պատկանում է Հիմնադիր 2-ին՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 15.12.2021թ. տրված թիվ 15122021-01-

0282 վկայականի, և այն հնարավոր է (Հիմնադիր 1-ին հայտնի տեղեկությունների համաձայն) օգտագործել Ծրագրի իրականացման նպատակով.

- սույն Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում չկան, Գույք 2-ի՝ Ընկերության կանոնադրական կապիտալում ներդրման պահին չեն լինի Գույք 2-ի նկատմամբ իրավական կամ այլ սահմանափակումներ կամ խոչընդոտներ, գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր, որևէ անձի իրավունքներ, սահմանափակումներ, ծանրաբեռնումներ (ներառյալ՝ օգտագործման կամ վարձակալության իրավունք, գրավ, արգելանքներ և այլն), գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր Գույք 2-ի գծով որևէ հարկային կամ այլ պարտավորություններ, ինչպես նաև Ընկերության կանոնադրական կապիտալում ներդրման պահին Հիմնադիր 2-ը համապատասխան համայնքային բյուջե է վճարել Գույք 2-ում ներառված հողամասի՝ վճարման պահին գործող կադաստրային արժեքը.
- սույն Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում չկան, Գույք 2-ի ներդրմանը նախորդող և ներդրման հետ կապված գործարքների մասով չեն լինի սահմանափակումներ, արգելանքներ, գործարքներն անվավեր ճանաչելու հիմքեր.
- առկա չեն տեղեկություններ, պայմաններ, նորմատիվ ակտեր, սահմանափակումներ, երրորդ անձանց իրավունքներ, թաքնված թերություններ մինչև Գույք 2-ի փոխանցումը, որոնք կարող են խոչընդոտել, սահմանափակել կամ անվավեր դարձնել սույն Պայմանագիրը կամ Ընկերության պետական գրանցումը կամ Գույք 2-ի ներդրումն Ընկերության կանոնադրական կապիտալում (փոխանցումն Ընկերությանը):
- առկա չէ կամ նախկինում չի եղել որևէ դատավարություն, վարչական վարույթ կամ քննություն ցանկացած պետական մարմնի կողմից Գույք 2-ի նկատմամբ, որը ներկայումս առկախված է կամ նախատեսվում է Գույք 2-ի նկատմամբ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ սույն Պայմանագրի օրինականության կամ վավերականության կամ սույն Պայմանագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրականացման վրա:

4.5. Կողմերը հաստատում են, որ իրենց կողմից սույն բաժնի ներքո տրված հավաստումները տրվել են սույն Պայմանագրի կնքումն ապահովելու նպատակով, և որ մյուս Կողմը կնքել է սույն Պայմանագիրը՝ այդպիսի հավաստումներից յուրաքանչյուրի վրա հիմնվելով և դրանց լիովին վստահելով:

4.6. Որևէ Կողմ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո չի կարող որևէ դատական, վարչական կամ այն վարույթում կամ որևէ այլ կերպ վկայակոչել, որ սույն բաժնում նշված իր հավաստիացումները կամ դրանցից գեթ մեկը սխալ կամ անարժանահավատ է:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Սույն Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Սույն Պայմանագրից բխող կամ դրա առնչությամբ ծագող որևէ ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

5.2. Սույն Պայմանագիրը չի հանդիսանում Ընկերության հիմնադիր փաստաթուղթ:

5.3. Ցանկացած վեճ կամ պահանջ, որը բխում է սույն Պայմանագրից, դրա խախտումից, դադարեցումից կամ անվավերությունից կամ առնչվում է դրանց, ենթակա է լուծման բանակցությունների միջոցով, որոնք կարող են նախաձեռնվել Կողմերից որևէ մեկի կողմից և իրականացվել գործարար շրջանառության սովորույթով նախատեսված որևէ եղանակով, եթե Կողմերն առանձին բանակցության անցկացման այլ կարգ կամ եղանակ չեն նախատեսել: Բանակցությունների առավելագույն ժամկետը 30 օր է: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում բոլոր վեճերը, բացառելով ՀՀ դատարանների իրավասությունը, հանձնվելու են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային

Դատարանի (ICC International Court of Arbitration, այսուհետ՝ Արբիտրաժային դատարան) լուծմանը՝ Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան: Վեճերի լուծման համար ձևավորվում է եռակազմ արբիտրաժային տրիբունալ, որում ընդգրկված արբիտրներն ընտրվում (նշանակվում) են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին համապատասխան:

Կողմերը պայմանավորվում են, որ.

ա) Արբիտրաժային տրիբունալի որոշումները ենթակա են պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետության և աշխարհի այլ երկրների տարածքում,

բ) Կողմերի միջև որևէ վեճի լուծման արդյունքում վարույթի, այդ թվում՝ իրավաբանական ներկայացուցչության հետ կապված Կողմի կրած ծախսերը դրվում են պարտվող Կողմի վրա: Սույնով Կողմերը հավաստիացնում են, որ տեղեկացված են Միջազգային Առևտրի Պալատի Արբիտրաժային Կանոններին:

Սույն արբիտրաժային համաձայնության նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Վեճերի քննությունն իրականացվում է ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան:

Արբիտրաժային դատավարության լեզուն անգլերենն է, Արբիտրաժի վայրը՝ Բրյուսել, Բելգիա: 5.4. Սույն Պայմանագիրը կազմում է Կողմերի ամբողջական պարտավորությունը Պայմանագրի առարկայի առնչությամբ և գերակա է սույն գործարքի առնչությամբ նախկինում ձեռք բերված բոլոր այլ համաձայնությունների նկատմամբ:

5.5. Սույն Պայմանագիրը կազմվում է 3 (երեք) հավասար իրավաբանական ուժ ունեցող բնօրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է սույն Պայմանագրի մեկական բնօրինակ:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՋՈՐԴ ԷՋՈՒՄ]

Հիմնադիր 1՝

Հայաստանի Հանրապետություն

Ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության

Նախարար՝ Գևորգ Պապոյան

Հիմնադիր 2՝

«ՀԱՅՓՈՍ» Փակ բաժնետիրական ընկերություն

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Արայիկ Աբրահամյան

Հիմնադիր 3՝

«ՌԵՆՇԻՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գլխավոր տնօրեն՝ Էդուարդ Մարության

Հավելված 1՝ «[---]» [---]ի 2024թ-ին կնքված
«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան»
փակ բաժնետիրական ընկերության
ստեղծման մասին պայմանագրի

Բաժնետիրական համաձայնագրի նախագիծ

[կցված է որպես առանձին փաստաթուղթ]

Հավելված 2՝ «[---]» [---]ի 2024թ-ին կնքված

**«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան»
փակ բաժնետիրական ընկերության
ստեղծման մասին պայմանագրի**

Ծրագրի իրականացման ժամանակացույցը, բյուջեն և բնութագիրը

Ծրագրի ընդհանուր գնահատված արժեքը կազմում է մոտ **212 մլն ԱՄՆ** դոլարին համարժեք դրամ գումար՝ ներառյալ հողի արժեքը: Գնահատումը հիմնված է շուկայի շինարարական ոլորտի իրական ծախսերի վրա՝ բաղադրիչների որակին և նկարագրությանը համապատասխան ճշգրտումներով: Ծրագրի ընդհանուր ծավալները հանրագումարային կարող են փոփոխվել մինչև **20** տոկոսի չափով, իսկ ծախսային առանձին հոդվածներ կարող են տատանվել նույնիսկ ավելին:

Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել հետևյալ համամասնությամբ՝ **25** տոկոս սեփական կապիտալի, իսկ **75** տոկոս՝ փոխառու միջոցների հաշվին: Վերոգրյալ համամասնությունը կարող է փոփոխվել՝ սեփական կապիտալի հաշվին Ծրագրի ֆինանսավորումը հասցնելով մինչև **35** տոկոսի: Նման պայմաններում փոխառու կապիտալի ներգրավման համամասնությունը համապատասխանաբար կճշգրտվի: Ծրագրի իրականացման համար փոխառու միջոցները նախատեսվում է ներգրավել միջազգային և տարածաշրջանային ֆինանսաբանկային կառույցներից, հայաստանյան խոշոր բանկերից, ինչպես նաև ֆինանսավորման այլ կառույցներից:

Ծրագրի իրականացման ժամանակացույց

| | |
|----------------------------|--|
| 2024 թվականի [լրացնել] | գործարքի ավարտ |
| 2024 թվականի դեկտեմբերի 31 | շինարարական հրապարակի պատրաստման սկիզբ |
| 2025 թվականի դեկտեմբերի 31 | շինարարության սկիզբ |
| 2029 թվականի դեկտեմբերի 31 | Ծրագրի վերջնաժամկետ՝ Համալիրի գործարկման սկիզբ |

Ծրագրի իրականացման ծախսային հիմնական հոդվածները՝ ըստ ժամանակագրության, որոնք հիմնված են ընթացիկ շուկայական մակարդակի վրա՝ հաշվի առնելով գործարկումից հետո տարեկան գնաճային ինդեքսավորումը²

| Ծախսերը | \$ քմ | 2024/2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 |
|--|-----------|----------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Կառուցապատման հոդվածներ | | | | | | |
| Հողի արժեք | | \$28,000,000 | \$28,000,000 | | | |
| Հարակից հողի արժեք | | \$20,000,000 | \$20,000,000 | | | |
| Քանդում | 50 \$/քմ | \$1,133,850 | | \$1,133,850 | | |
| Միջազգային ճարտարապետներ | 49 \$/քմ | \$6,000,000 | \$5,142,857 | \$857,143 | | |
| Տեղական ճարտարապետներ | 19 \$/քմ | \$1,848,375 | \$1,584,321 | \$264,054 | | |
| Համաձայնություններ, թույլտվություններ | | \$50,000 | | \$50,000 | | |
| Ենթակառուցվածքներ | | \$1,500,000 | | \$750,000 | \$750,000 | |
| Ավտոկայանատեղիների կառուցում | 400 \$/քմ | \$15,600,000 | \$10,830,222 | \$4,769,778 | | |
| Կարկաս | 450 \$/քմ | \$42,112,500 | \$7,750,000 | \$21,056,250 | \$13,306,250 | |
| Ինժեներական համակարգեր | 450 \$/քմ | \$37,326,250 | | \$14,529,792 | \$22,796,458 | |
| Ներքին հարդարանք / Ընդհանուր տարածքներ | 300 \$/քմ | \$27,038,500 | | \$12,970,083 | \$14,068,417 | |
| Լանդշաֆտ | 30 \$/քմ | \$1,503,245 | | \$559,376 | \$943,869 | |
| Ռիթեյնի ներքին հարդարանք | | \$6,000,000 | | | \$6,000,000 | |
| Նախաբացման ծախսեր | | \$1,800,000 | | | \$1,800,000 | |
| Պրոյեկտի կառավարման վճար | 5% | \$6,254,025 | \$929,011 | \$2,731,764 | \$2,593,250 | |
| Մարքեթինգի/գործակալների վճարներ | | \$2,260,800 | | | \$753,600 | \$1,507,200 |
| Ապահովագրություն | 0.50% | \$617,902 | | \$92,901 | \$269,426 | \$255,575 |
| Բուժեր | 10% | \$12,508,050 | | \$1,858,022 | \$5,463,528 | \$5,186,499 |
| Ընդամենը կառուցապատման ծախսեր | | \$211,553,497 | \$54,727,178 | \$23,765,203 | \$63,099,997 | \$68,453,918 |
| | | | | | | \$1,507,200 |

Ծրագրի իրականացման մասով եկամուտների և դրամական հոսքերի կանխատեսումները ներկայացված են ստորև²

| Համախառն եկամուտ | 2024/2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 | 2032 | 2033 | 2034 |
|--|-----------|-----------------------|-----------------------|-----------------------|-----------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Գրասենյակներ | | | | \$546,821 | \$4,040,346 | \$6,828,793 | \$9,604,096 | \$9,892,219 | \$10,188,985 | \$10,494,655 |
| Առևտրի կենտրոն | | | | \$1,594,115 | \$10,811,561 | \$13,479,463 | \$14,779,264 | \$15,222,642 | \$15,679,321 | \$16,149,701 |
| Հյուրանոցային համալիր | | | | \$1,809,832 | \$11,380,225 | \$14,224,723 | \$16,414,969 | \$18,391,778 | \$18,923,000 | \$19,383,283 |
| Ընդամենը համախառն եկամուտ | | | | \$3,950,768 | \$26,232,132 | \$34,532,979 | \$40,798,329 | \$43,506,639 | \$44,791,307 | \$46,027,639 |
| Գործառնական ծախսեր | | | | | | | | | | |
| Գրասենյակներ | | | | \$119,605 | \$743,506 | \$845,829 | \$948,317 | \$976,766 | \$1,006,069 | \$1,036,251 |
| Առևտրի կենտրոն | | | | \$243,103 | \$1,501,885 | \$1,617,248 | \$1,692,628 | \$1,743,407 | \$1,795,709 | \$1,849,581 |
| Հյուրանոցային համալիր | | | | \$1,044,389 | \$6,532,657 | \$7,891,551 | \$9,038,009 | \$10,378,878 | \$10,673,327 | \$10,973,134 |
| Ընդամենը գործառնական ծախսեր | | | | \$1,407,097 | \$8,778,049 | \$10,354,628 | \$11,678,954 | \$13,099,052 | \$13,475,106 | \$13,858,966 |
| Զուտ գործառնական եկամուտ | | | | \$2,538,208 | \$17,408,692 | \$24,110,652 | \$29,045,076 | \$30,331,060 | \$31,237,378 | \$32,087,485 |
| Մաշվածություն | | | | \$1,104,706 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 |
| Շահույթ մինչև տոկոսները | | | | \$1,433,502 | \$10,780,455 | \$17,482,416 | \$22,416,839 | \$23,702,823 | \$24,609,142 | \$25,459,248 |
| Տոկոսային ծախս | | \$646,927 | \$3,208,094 | \$7,495,463 | \$9,308,025 | \$8,861,001 | \$8,194,343 | \$7,527,685 | \$6,861,026 | \$5,703,633 |
| Հարկվող շահույթ | | (\$646,927) | (\$3,208,094) | (\$6,061,961) | \$1,472,430 | \$8,621,414 | \$14,222,496 | \$16,175,139 | \$17,748,115 | \$19,755,615 |
| Շահութահարկի գծով ծախս | | (\$116,447) | (\$577,457) | (\$1,091,153) | \$285,037 | \$1,551,855 | \$2,560,049 | \$2,911,525 | \$3,194,661 | \$3,556,011 |
| Կուտակված վնաս | | (\$116,447) | (\$693,904) | (\$1,785,057) | (\$1,830,438) | | | | | |
| Վնասի նվազեցում | | | | | \$310,419 | \$1,520,019 | | | | |
| Շահութահարկի գծով ծախս | | | | | \$310,419 | \$1,551,855 | \$2,560,049 | \$2,911,525 | \$3,194,661 | \$3,556,011 |
| Զուտ շահույթ | | (\$646,927) | (\$3,208,094) | (\$6,061,961) | \$1,472,430 | \$8,589,579 | \$11,662,447 | \$13,263,614 | \$14,553,455 | \$16,199,605 |
| Մայր գումարի մարում | | | | | \$1,851,829 | \$11,110,974 | \$11,110,974 | \$11,110,974 | \$11,110,974 | \$10,185,059 |
| Մաշվածության ճշգրտում | | | | \$1,104,706 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 | \$6,628,237 |
| Դրամական հոսքեր | | (\$646,927) | (\$3,208,094) | (\$4,957,255) | \$6,248,838 | \$4,106,842 | \$7,179,710 | \$8,780,877 | \$10,070,718 | \$12,642,782 |
| Սեփական կապիտալ | | | | | | | | | | |
| Դրամական հոսքեր | | (\$54,727,179) | (\$1,919,748) | (\$3,208,094) | (\$4,957,255) | \$6,248,838 | \$4,106,842 | \$7,179,710 | \$8,780,877 | \$10,070,718 |
| Վերջնական գնահատում | | | | | | | | | | \$224,409,587 |
| Ընդամենը դրամական հոսքեր | | (\$54,727,179) | (\$1,919,748) | (\$3,208,094) | (\$4,957,255) | \$6,248,838 | \$4,106,842 | \$7,179,710 | \$8,780,877 | \$10,070,718 |
| Ներքին վերադարձելիության դրույք | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | 19.1% |
| Զուտ դրական արժեք (NPV @ 12%) | | \$ 36,548,871 | | | | | | | | |
| Համախառն պրոյեկտ | | | | | | | | | | |
| Դրամական հոսքեր | | (\$54,727,179) | (\$23,765,203) | (\$63,100,063) | (\$65,915,777) | \$15,901,492 | \$24,110,652 | \$29,045,076 | \$30,331,060 | \$31,237,378 |
| Վերջնական գնահատում | | | | | | | | | | \$322,510,481 |
| Ընդամենը դրամական հոսքեր | | (\$54,727,179) | (\$23,765,203) | (\$63,100,063) | (\$65,915,777) | \$15,901,492 | \$24,110,652 | \$29,045,076 | \$30,331,060 | \$31,237,378 |
| Ներքին վերադարձելիության դրույք | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | 13.9% |
| Զուտ դրական արժեք (NPV @ 12%) | | \$ 17,449,357 | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

² Հատուկ նշում՝ Ծրագրի վերաբերյալ վերոգրյալ կանխատեսումները հեռանկարային են, և փաստացի արդյունքները կարող են տարբերվել՝ կախված շուկայի զարգացող պայմաններից և չնախատեսված գործոններից՝ հաշվի առնելով տնտեսության դինամիկ բնույթը և փոփոխությունների նկատմամբ դրա զգայունությունը: